

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ղեկավարի 2011թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սիրելի համագյուղացիներ.

Թույլ տվեք ներկայացնեն 2011թ. մեր կողմից կատարված աշխատանքները:

Միանգամից նշեն, որ այս տարի արձանագրվել է բավականին բարձր ցուցանիշներ սեփական եկամուտների գծով, մասնավորապես հողի հարկի, գույքահարկի և վարձավճարների գծով:

2011թ. ընթացքում հավաքագրվել է 76029.4 հազ. դրամ կամ տարեկան պլանը կատարվել է` 95.9%:

Հողի հարկի գծով 2011թ. հավաքագրվել է 6426.6 հազ. դրամ:

Գույքահարկի գծով 2011թ.-ին հավաքագրվել է 4147.9 հազ. դրամ:

Տեղական և պետական տուրքերի գծով 2011թ. հավաքագրվել է 1034.7 հազ.դրամ:

Ոչ հարկային եկամուտները այս տարի կատարել ենք 109.8% ով:

Ընդհանուր առմամբ սեփական եկամուտները 2011թ-ի 19850.0 հազ.դրամի դիմաց փաստացի կատարվել է 17483.9 հազ.դրամ կամ պլանը կատարվել է 88.1%-ով:

Ինչպես երևում է համայնքը հիմնականում կատարել և նախատեսված առաջադրանքները, որը և հիմք է հանդիսացել մեր բնականոն աշխատանքներին և նպաստել համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Այն, որ համայնքում տարեց-տարի արձանագրվում են դրական տեղաշարժեր, կարելի է նկատել նաև անգեն աչքով:

Անխափան գործում է մանկապարտեզը 2 խմբով: Ապահովել ենք բոլոր անհրաժեշտ պարագաներով, ջեռուցվում է շենքը: Այս հողվածով ծախսվել է 4134.0 հազ. դրամ:

750.0 հազ. դրամ հատկացրել ենք միջնակարգ դպրոցին գույքի / սեղան աթոռի/ վերանորոգման և ջեռուցման համար:

Մեծ ուշադրություն է դարձվում համայնքի բնակչության սոցիալական, մշակույթի և սպորտի բնագավառներում:

Համայնքի բյուջեի հաշվին պահվում են ֆուտբոլի, շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի և կարատեի խմբակներ, որտեղ հաճախում են մոտ 100 երեխաներ: Ձեռք բերված սպորտային հաջողությունների շնորհիվ այս տարի համայնքը արժանացավ հատուկ շնորհակալագրի, իսկ մնացած բնագավառներում ցուցաբերած հաջողությունների համար 2011թ. համայնքը ճանաչվեց որպես «Լավագույն կանաչապատ համայնք»:

Համայնքում գործում է նաև մեկ պարի խումբ, ասեղնագործության և հելիոնագործության խմբակներ, ինտերնետային ակումբ, ինչպես նաև «Զարթոնք» ԵԳԱ երիտասարդական խմբերը: Կուլտուրայի տանը առանձնացված է խաղասենյակ՝ իր խաղամիջոցներով:

Համայնքի բյուջեից տրվել է դրամական օգնություն անապահով ընտանիքներին և կարիքավորներին տարբեր նպատակներով:

Մասնավորապես արդեն ընդունված կարգ է վերջին 7-8 տարիներին թաղման կապակցությամբ յուրաքանչյուր ընտանիքին տրվում է 50.0 հազ. դրամ, ևս 30.0 հազարական դրամ տրվում է նորածիններին: Ընդամենը ամբողջ սոցիալական բնագավառում ծախսվել է 8.9 մլն դրամ:

Պատշաճ կերպով կազմակերպվել են ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները (շրջանավարտների, առաջին դասարան հաճախողների, զորակոչիկների, մանկապարտեզի երեխաների, տարեցների միջազգային օրվա արթիվ, նոր տարի, մարտի 8 և ապրիլի 7, ուսուցչի օր, եղեռնի օր, հայրենական պատերազմի և Շուշիի ազատագրման օր, մարզական միջոցառումներ և այլն): Ընդհանուր հաշվով այդ միջոցառումների համար ծախսվել է 2262.0 հազ. դրամ:

2011թ.-ին վերանորոգվել է «Ձորի» թաղի ոռոգման ջրագիծը 0.3 կմ, որի համար ծախսվել է 709.5 հազ. դրամ և ամենօրյա աշխատանքների շնորհիվ զգալիորեն

բարելավել է նաև խմելու ջրի հարցը: Այսինքն, կարող ենք արձանագրել, որ եթե Գավառից ջրամատակարարման խափանումներ չլինեն, ամբողջ գյուղն ապահովված կլինի խմելու ջրով: Անհրաժեշտության դեպքում օգտագործվում են խորքային հորերը ոռոգման և կենցաղային նպատակներով:

Կառուցվել է «Ձորի» թաղի լուսավորությունը, որի համար ծախսվել է 1700.0 հազ.դրամ: Այսպիսով գյուղի հիմնական փողոցները ամբողջովին լուսավորված են: Նախատեսվում է մնացած երկրորդական փողոցներում ևս վերականգնել փողոցային լուսավորությունը:

Համայնքի ամբողջ տարածքում հիմնական փողոցների վրա տեղեղրվել են աղբարկղներ և աղբահանությունը կատարում է Սևանի կոմունալ տնտեսությունը գյուղապետարանի միջոցներով, նախատեսվում է անհրաժեշտության դեպքում ավելացնել աղբարկղների քանակը: Սիստեմատիկաբար կատարվում է դաշտամիջյան և գյուղամիջյան երկրորդական ճանապարհների փոսալցում և հարթեցում: Ամեն տարի կատարվում է թափառող շների ոչնչացման աշխատանքներ որի համար ծախսվել է 242.0 հազ. դրամ:

Վերջապես համայնքը ունեցավ իր արարողությունների սրահը, ապահովված բոլոր կոմունալ հարմարություններով: Համայնքի միջոցների հաշվին ձեռք է բերվել մասնաշենք, կահույք, սպասք և այժմ այն տրամադրվում է համայնքի բնակչությանն անվճար:

2011թ. դեկտեմբերին ամանօրյա տոնական միջոցառումների կազմակերպման համար ծախսվել է 1500.0 հազ.դրամ: Համայնքում տեղադրվեց երկու հսկա տոնածառներ և ամբողջ փողոցները լուսավորվեց բազմահազար լույսերով:

2011թ. փողոցների համարակալման համար ծախսվել է 698.0 հազ.դրամ:

Չնայած այս ամենին դեռևս համայնքում կան չլուծված խնդիրներ, որոնք գտնվում են համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Համայնքն ունի իր զարգացման քառամյա ծրագիրը, որով 2012թ. - ին նախատեսված է կառուցել նոր եկեղեցի և զբոսայգի, ինչպես նաև վերանորոգել

կուլտուրայի տունը և մարզադաշտը: Արդեն սկսվել է կուլտուրայի տան վերանորոգումը, իսկ եկեղեցու և զբոսայգու նախագծանախահաշվային աշխատանքները ավարտվել են, և գարնանը կսկսվի շինարարական աշխատանքները:

Վերջին տարիներին աշխատակազմի կողմից կատարված աշխատանքների շնորհիվ զգալիորեն բարձրացել է համայնքի դերը և նրանք ամուր կանգնած են յուրաքանչյուր բնակչի կողքին:

Հույսով են, որ նրանց շնորհիվ ի վիճակի ենք կատարելու ինչպես քառամյա ծրագրով, այնպես էլ աշխատանքի ընթացքում առաջացած առաջնային խնդիրները:

ԼՆԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

Կ. ՄԱՐԳԱՐՅԱՆ